ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 115 - Ա **29 հունիսի 2016 թ.**

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ, ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության բժշկական հաստատությունների տնօրեններին՝ 2016 թվականի հուլիսի 3-ին Վարդավառի տոնակատարության ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության առաջնային, շտապ և անհետաձգելի բժշկական օգնությունը և սպասարկումը ապահովելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բժշկական հաստատություններում սահմանել հերթապահություն՝ ներգրավելով նաև նեղ մասնագետ բժիշկների.

2) ուշադրության կենտրոնում պահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շտապ օգնության ծառայությունների աշխատանքները և ապահովել նրանց կողմից բնակչությունից ստացված յուրաքանչյուր կանչի անհապաղ սպասարկումը.

3) Վարդավառի տոնակատարությունից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

[redacted] ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ